

ԱՌԹՈՒՐ ԴՊԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Գևորգյան Հոգևոր ճեմարանի Դ լսարանի սան

ԽԱՂՈՂՕՐՀՆԵՔ

*«Պատվիր Տիրոջը ջո արդար
վաստակից և ջո արդար բերքից
պտոնդ հասկացրու նրան»*

Առակաց Գ 9/

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր բարեպաշտական արարողություններից է Ա. Մարիամ Աստվածածնի Վերափոխման տոնին, Ա. Պատարագից հետո կատարվող խաղողի օրհնությունը¹ (իտալ. – benedizione dell'uva):

Տակավին նախաքրիստոնեական շրջանում, գրեթե բոլոր ժողովուրդների կրոնական ծիսակարգի մաս էր կազմում «Տօն արմտեաց եւ պտղոց»-ը²: Առկն տոնի համաձայն, տարվա առաջին պտուղը, իմա՝ երախայրիքն ի նշան հնազանդության, հպատակության, երախտագիտության և առաջիկա տարվա բերքի առատության՝ տաճարի սպասավորների, քրմերի կողմից կատարվող հատուկ արարողակարգով նվիրաբերվում էր տվյալ ժողովրդի դիցարանում պտղաբերությունը մարմնավորող աստվածությանը:

Վերոհիշյալ նվիրաբերման արարողությունը Հայոց ծիսական կյանքում ևս առկա էր: Սակայն, ի տարբերություն մնացյալ ժողովուրդների արարողակարգում ընդհանրացած սովորության, Հայոց ծիսակարգում այդ ընծայաբերումն առանձնացված չէր իբրև «Տօն արմտեաց եւ պտղոց», այլ՝ համարվում էր Անահտական տոներից մեկը, քանի որ Հայոց դիցարանում մի շարք այլ հատկանիշների հետ միասին, պտղաբերության ու արգասավորության մարմնավորողը եղել է Անահիտ դիցուհին³:

Ահավասիկ Անահիտ աստվածուհու տոնին՝ Նավասարդի (օգոստոս) տասնմեկին (ԺԱ)⁴, որը կապված էր պտղոց հասունացման ու այգեկուտի հետ՝ հազարավոր ուխտավորներ, բռնված Հայոց այգեստանների բարիքներով, գնում ու խոնջվում էին Անահտական մեծյանների շուրջը: Տաճարի սպասավորների կողմից կատարվում էին ծիսակատարություններ, որից հետո բերված պտուղները (խաղող, խնձոր, դեղձ ևն)՝ հատուկ ծոցերով նվիրաբերվում էին պտղաբերության ու արգասավորության դիցուհուն:

«Անահիտի այս գլխավոր տոնը մեծ շքեղությամբ կատարվում էր երիզայում, որին մասնակցում էին նաև թագավորներն իրենց շքախմբերով հանդերձ»⁵:

¹ Լշենք, որ Հիսուս Քրիստոսի Այլակերպության տոնին, Ռուս Ռուղափառ Եկեղեցում կատարվում է խնձորի օրհնություն «Яблочный Спас» /«Закон Божий» первая книга о православной вере», Москва, 1991, стр. 173/:

² Արտակ արք. Մանուկյան, «Շողարծակ», հտ. Գ, Թեհրան, 1991, էջ 124:

³ Ազաթանգեղոս, «Հայոց պատմություն», Երևան, 1983, էջ 41, 47: Նաև՝ «Ազգային տոներ», Երևան, 1996, էջ 26:

⁴ Ըստ Յայսմաւուրջի (հտ. Բ, Կոստանդնուպօլիս, 1834, էջ 77), այդ տոնը եղել է Նավասարդի տասնհինգին (ԺԵ), որն էլ գուցե ավելի ճիշտ է, քանի որ համընկնում է Ա. Աստվածածնի Վերափոխման տոնին:

⁵ Կ. Սելից-Փաշայան, «Անահիտ դիցուհու պաշտամունքը», Երևան, 1963, էջ 136:

Կարևոր ենք համարում նշել, որ թեպետև նախաքրիստոնեական շրջանում այգիների երախայրիքը տվյալ ժողովրդի ավանդական արարողակարգով ընծայաբերվում էր կուռքերին, բայց այնուհանդերձ, այն աղանորդու համար միակ ճշմարիտ Աստծո կողմից սահմանված կարգ էր և ոչ թե հեթանոսական խոտելի արարողություն:

Վերոհիշյալ ընծայաբերման կարգի աստվածադիր լինելու վառ ապացույց է՝ Իսրայելի որդիներին Մովսես մարգարեի տված պատգամը, որն ի դեպ Ամենակալ Աստված էր հրամայել մեծ մարգարեին. «Երբ մտնես այն երկիրը, որ քո Տեր Աստվածը քեզ է տալու իբրև սեփականություն, երբ ժառանգես այն ու բնակվես այնտեղ, ապա կվերցնես քո Տեր Աստծու քեզ տված երկրի պտուղների առաջին բերքը, կցնես զամբյուղի մեջ և կգնաս այնտեղ, ուր կընտրի Տեր Աստվածը, որպեսզի իր անունը հայտնի դարձնի այնտեղ: Կգնաս այդ ժամանակ քահանայություն անողի մոտ և կասես նրան. «Այսօր զոհություն եմ հայտնում իմ Տեր Աստծուն...: Արդ, ահա բերել եմ Տիրոջ ինձ տված երկրի բերքի երախայրիքը...»⁶:

Եշենք, որ «ընծայվելիք բերքերն էին՝ ցորեն, գարի, խաղող, թուզ, մուռ, ձիթապտուղ, մեղր»⁷: Միաժամանակ տեղեկացնենք, որ սույն ընծաների մեջ իսրայելացիների համար յուրահատուկ նշանակություն ունեւ խաղողը. նախ որովհետև նրանից է պատրաստվում «տրտմության լուծիչ և ուրախության պատճառ»⁸ գինին, և երկրորդ՝ քանի որ խաղողը եղել է Իսրայելի ազգային և մինևույն ժամանակ խաղաղության ու բարօրության խորհրդանշանը⁹:

Ահավասիկ աստվածադիր կանոնի համաձայն, իսրայելացիներն ամեն տարի իրենց այգիների առաջին բերքը, վերը ներկայացված կարգի համաձայն, ընծայում էին Աստծո տաճարին. Իսրայելի որդիները հստակ գիտակցում ու անկեղծ հավատում էին, որ այն քոլոր բարիքները, որ իրենք վայելում էին, Բարձրյալ Աստծուց էր տրված: Ուստի ի նշան երախտագիտության, իբրև Աստծո մշակներ պետք էր, որ իրենց արդար վաստակի ու արդար բերքի երախայրիքը հատկացնեին Բարերար Աստծուն:

Ի վերջո՝ «Քեզանից թոնը՝ Քեզ ենք ընծայում»¹⁰. արդարև ամեն ինչ Աստված է ստեղծել, և այն ամենն, ինչ որ մարդիկ նվիրում են Նրան, Իրեն է պատկանում:

Ահա և երբ փրկչական 301 թվականին Հայաստան աշխարհում քրիստոնեությունը ճանաչվեց պետական կրոն, Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայրապետն իմաստուն մի տնօրինությամբ ինչպես որ մեկյանները մասնակի փոփոխությունների ենթարկելով վերածեց քրիստոնեական տաճարների, այնպես էլ բազմաթիվ հեթանոսական արարողություններ ու սովորություններ քրիստոնեականացրեց: Նպատակը մեկն էր. հայ ազգային հնավանդ ծեսերն ու սովորությունները մոռացության չպետք է մատնվեին:

Նվիրական ավանդության համաձայն, մեր Հավատո Հոր կողմից քրիստոնեականացված արարողություններից էր նաև՝ այգեկութի երախայրիքի ընծայումը Ս. Եկեղեցուն: Սույն արարողության Աստվածահաճո, ավելիմ՝ Աստվածադիր լինելը տեսնելով՝ Ս. Գրիգոր Հայրապետն այն հարմարեցնելով կցեց Անահիտ դիցուհու տոնին փոխարինած Ս. Մարիան Աստվածածնի տոնին¹¹: Ինչո՞ւ. նախ՝ որովհետև հնում պտղոց երախայրիքն ընծայվում էր

⁶ Երկրորդ Օրենք ԻԶ 1-3, 10:

⁷ Արտակ արք. Մանուկյան, «Շողարձակ», հտ. 9, էջ 124:

⁸ «Ճաշոց Գիրք Հայաստանյայց Սոաքելական Սուրբ Եկեղեցվո», հտ. Բ, Երուսաղեմ, 1873, էջ 201:

⁹ "Библейская энциклопедия", Москва, 1996, стр. 17.

¹⁰ «Խորհրդատետր Սրբոյ Պատարագի ըստ Ծիսի Սոաքելական Սուրբ Եկեղեցւոյ», Վաղարշապատ, 1880, էջ 14:

¹¹ Այսինքն «Վերափոխումն Ս. Աստվածածնի»:

պտղաբերության դիցուհուն, և քանի որ նրա տոնը փոխարինվել էր Ա. Աստվածամոր տոնով, ապա հարմար էր, որ երախայրիքի նվիրաբերումը նատարվեր Ա. Աստվածածնի տոնի օրը¹²: Երկրորդ՝ քանի որ նախապատվությունը տրվեց խաղողին, և որովհետև այն առավելաբար այդ ժամանակ էր հասունանում¹³, ուստի հետ այսու Ա. Տիրամոր տոնին զուգակցվող նշանակալից իրողություններից մեկը դարձավ, ի նշան տարվա առաջին բերքի Աստծուն ընծայման, քահանաների կողմից խաղողի օրհնությունը:

Չետագայում, խաղողօրհնների արարողությունը՝ մարգարեական, Ավետարանական ու առաքելական ընթերցվածքներով և հատուկ աղոթքով ճոխացվեց Ա. Ներսես Շնորհալի Չայրապետի ձեռամբ. «... Օրհնի՛ր Տեր, և (այն) որթատունկերն ու նրանց այգիները, որոնցից հատվեցին օրհնության (այս) ողկույզները և Սուրբ Եկեղեցուն ընծայվեցին: Նրանց բազմաբեր դարձրու՛ պտղաբերությամբ պարարտ ու բարեբեր հողին նմանվելու (համար): Անփորձ պահիր, Տեր, այգեստաններն ու դաշտերը... բոլոր [այն] պատուհասներից, որոնք ի վերուստ իջնում են մեր մեղքերի պատճառով՝ կարկտից, եղեմնահար սառնամանիքներից, խորշակահար հողմերից և վնասակար ճիճուներից...»¹⁴:

Իսկ ինչո՞ւ պտուղների մեջ նախապատվությունը տրվեց խաղողին. մախ՝ որովհետև տակավին Նոյ նահապետի ժամանակներից խաղողն Արարատյան դաշտավայրի գարդն էր, դեռ ավելին, այն հայ ժողովրդի համար պտուղներից ամենաազնվագույնն էր, արքան: Երկրորդ՝ որովհետև խաղողի արյունը՝ գինին, «տրտմության լուծիչ է և ուրախության պատճառ»¹⁵: Երրորդ՝ որովհետև Չիսուս Փրկիչն իրեն նմանեցրել է խաղողի որթին¹⁶: Չորրորդ՝ որովհետև «խաղողի արյունն (այսինքն՝ գինին – Ա. Կ.) արժանացավ օրհնության մեծագույն շնորհների... Միածին Որդու փրկչական արյան նյութը լինելով, որով [և] գնվելով ազատվեցինք մահվան ու մեղքերի ծառայությունից, որը (այսինքն՝ գինին – Ա. Կ.) վերնատան խորհրդի ժամանակ (Վերջին ընթրիք – Ա. Կ.) [Չիսուս] վերցրեց, օրհնեց՝ ասելով. «Այս է իմ արյունը...»¹⁷»¹⁸:

Ահավասիկ այս տրամաբանությամբ էր, որ Չայրց եկեղեցուն նախապատվությունը տրվեց խաղողին, որն էլ ամեն տարի, Ա. Աստվածածնի Վերափոխման տոնին, Ա. Պատարագից հետո օրհնվում և բաշխվում է հավատացյալ հայորդիներին. «...Որպեսզի (այս) նյութական պտղի ճաշակման հետ, ճաշակողներին հոգիներին դրանից միանա Քո օրհնության իմանալի շնորհը՝ ընդունելով մաքրություն և մեղքերի թողություն, [որպեսզի դրա միջոցով] նաև Կենաց ծառի պտղին, որը բոցեղեն սրով հրամայեցիր պահել քերովբեների դասին, արժանի լինենք ճաշակելու»¹⁹:

Վերջում ցանկանում ենք նշել, որ հույժ փափագելի է, որ այսօր ևս հավատացյալ հայորդիներից նրանք, ովքեր խաղողի որթեր կամ այգեստաններ ունեն, խաղողօրհնության ժամանակ Ա. Եկեղեցուն ընծայեն իրենց բերքի երախայրիքը, որպեսզի ըստ այդմ վերանորոգվի մեր Չավատո Չայր Ա. Գրիգոր Լուսավորչի սահմանած արարողության բուն նշանակությունը, որը և վերը փորձեցինք մեր համեստ ուժերով ներկայացնել:

¹² Միայն այսպես էր հնարավոր ժողովրդի միջից արմատախիլ անել քրիստոնեությանն ամենկին անհարիր որոշ հեթանոսական արարողություններ:

¹³ Այսինքն՝ Լավասարդին (օգոստոս), իսկ Ա. Աստվածածնի Վերափոխման տոնը հետագայում նշվեց օգոստոսի 12-ից 18-ը հանդիպող կիրակի օրը:

¹⁴ Հմմտ. «Ճաշոց Գիրք», հտ. Բ, էջ 201:

¹⁵ Նույն տեղը, էջ 201:

¹⁶ Հովհ. ժե 1:

¹⁷ Հմմտ. Սարկ. ԺՂ 24:

¹⁸ «Ճաշոց Գիրք», հտ. Բ, էջ 200:

¹⁹ Նույն տեղը, էջ 200: